ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուսուցչի մասնակցությունը հաստատության մեթոդմիավորումների աշխատություններին

Անցկացման վայր՝ Վարդենիս

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝ Իրինա Հարությունյան

Դպրոց՝ Վանևան գյուղի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

1.Ներածություն.....**3**

2.Գրական ակնարկ.....**5**

3. Փորձարարական հետազոտություն.....**7**

4.Արձանագրության.....**12**

4.1 Փորձարարական հետազոտություն.....**15**

4.1.Խմբի նկարագիր.....**15**

5.Վերլուծություն.....**16**

6.Եզրակացություն.....**17**

2.Գրականության ցանկ.....**18**

Ներածություն

Ուսուցիչների մեթոդական աշխատանքը կազմակերպող գլխավոր կառույցը առարկայական մեթոդմիավորումն է: Այն նպաստում է ուսուցիչների մասնագիտական վարպետության, մեթոդական կուլտուրայի, ստեղծագործական ներուժի բարձրացմանը:

Առարկայական մեթոդմիավորումների մեթոդական աշխատանքը կարող է ունենալ կազմակերպման հետևյալ ձևերը.

- դասախոսություն,
- սեմինար,
- գործնական սեմինար,
- ստեղծագործական բանավեճ,
- հյուրասրահ,
- կոլեկտիվ ստեղծագործ աշխատանքի ժամ,
- գործնական խաղեր,
- իրավիճակային ուսուցում,
- դերային խաղեր,
- մեթոդական մրցույթներ,
- մեթոդական գաղափարների տոնավաճառ,
- մեթոդական վարպետության դասեր,
- բանավեճեր,
- որոնողա-ստեղծագործական աշխատանքներ, նախագծեր,
- հանդիպում <<կլոր սեղանների>> շուրջ:

Կարող են կազմակերպվել նաև գործնական աշխատանքներ, բաց դասեր, ըստ առարկաների արտադասարանական միջոցառումներ, առարկայական շաբաթներ, <<Տարվա ուսուցիչ>> մրցույթներ, գիտագործնական համաժողովներ, մեթոդական փառատոներ և այլ մեթոդական միջոցառումներ:

Աշխատանքի ընթացքում կարող են անցկացվել առարկայական մեթոդմիավորումների միավորված նիստեր: Առարկայական մեթոդմիավորումների աշխատանքների շրջանակում հետաքրքրություն են ներկայացնում նաև ուսուցիչներին տրվող տնային աշխատանքները: Դրանք կարող են լինել՝

- դասի մոդելավորում (հատվածաբար կամ ամբողջական),
- տրված թեմայով դասերի մշակումներ,
- որոշակի թեմայով հետազոտություններ կատարելու ծրագրերի մշակում,

- ըստ որոշակի թեմայի, պրոբլեմի գրականության ընտրություն,
- ստուգիչ հյուրերի, թեստերի կազմում,
- հուշագրերի, դիդակտիկ հյուրերի կազմում, պատրաստում,
- առարկայական, արտադասարանական միջոցառումների մշակում,
- այցելություններ դասերի, արտադասարանական միջոցառումների՝ վերլուծություններով,
- տրված թեմայի, խնդրի վերաբերյալ սեփական փորձի ներկայացում,
- աշխատանք՝ ինքնակրթության համար ընտրված թեմայի շուրջ,
- որոշակի պրոբլեմի շուրջ զեկուցման նախապատրաստում,
- ուսումնասիրած թեմայի, խնդրի շուրջ շնորհանդեսի նախապատրաստում,
- սեփական հետազոտությունների շրջանակում ձեռքբերումների ներկայացում,
- որոշակի թեմայով կամ միասնական մեթոդական թեմայով ստեղծագործական հաշվետվություն:

Առարկայական մեթոդմիավորումների աշխատանքներում որոշակի կարևորություն է տրվում նաև ուսուցիչների ինքնակրթության կազմակերպմանը: Հոգեբանները գտել են, որ միայն այն գիտելիքներն են դառնում համոզմունք, որոնք մարդն ինքնուրույն է ձեռք բերում:

Եվ եթե գիտելիքների սկզբնական ընկալումը կայուն չէ, ապա հաջորդող աշխատանքը պետք է լինի անհատական և պետք է իրագործվի այն ծավալով ու տեմպով, որ անհրաժեշտ են յուրաքանչյուր անձի: Իսկ դա հնարավոր է միայն ինքնուրույն կրթական գործունեության պայմաններում: Առավել արդյունավետ ձևով այն կազմակերպել հնարավոր է մեթոդմիավորումների նիստերի ընթացքում՝ արդյունքները ներկայացնելով տարբեր ձևերով. զեկուցումներ, բաց դասեր, ստեղծագործական հաշվետվություններ: Այս բոլորը պլանավորվում է նախապես և վերահսկվում է մեթոդմիավորման ղեկավարի կողմից:

2. Գրական ակնարկ

Ինչպե՞ս պետք է կազմակերպել մեթոդմիավորման աշխատանքը դպրոցում:

Աշխատանքային պլանում պետք է առանձնացնել հիմնական ուղղությունները, օրինակ՝ ուսուցման որակի բարձրացում, դաստիարակչական գործընթացի կատա- ելագործում՝ միտված երեխայի անձի զարգացմանը: Մեթոդմիավորման աշխատանքն անհրաժեշտ է կառուցել ընդհանուր մանկավարժական խնդիրների շուրջ, որն այդ պահին ծառացել է դպրոցի առջև: Ընդհանուր թեմայի քննարկման ընթացքում մեթոդմիավորման նիստերում ցանկալի է կոնկրետացնել այն: Թեմայի որոշումից հետո անհրաժեշտ է նշել դրա գործնական ելքի ձևը. ելույթներ սեմինարներում, բաց դասի ընթացքում աշխատանքի փորձի ներկայացում և այլն:

Մեթոդական աշխատանքի ժամանակակից մակարդակի ապահովման համար կրթական հաստատությունում կարևոր է կազմակերպել աշխատանք՝ ուսուցիչներին նորմատիվ փաստաթղթերի, մեթոդական և առարկայական նոր գրականության ծանոթացման ուղղությամբ:

Մեթոդմիավորման նիստերում կարելի է ուշադրություն հրավիրել այն հարցերին, որոնք կապված են հանձնարարականների, հուշագրերի, ծրագրի առավել բարդ թեմաների քայլաշարի կազմմանը, առաջավոր մանկավարժական փորձի ուսումնասիրմանն ու տարածմանը:

Անհրաժեշտ է մանկավարժական փորձին վերաբերվել զգուշությամբ ու խնամքով և հաշվետվությունների, հոդվածների տեսքով դրանք տեղադրել մեթոդական <<գանձ- արկղում>>:

Հնարավոր է կազմակերպել դասապլանների, ստեղծագործական աշխատանքների, զննական միջոցների, լավագույն տետրերի ցուցահանդեսներ: Մանկավարժական վարպետության կատարելագործման նպատակով մեթոդմիավորումը կազմում է դասերին փոխադարձ այցելությունների պլան-գրաֆիկ: Մեթոդմիավորման աշխատանքում մեծ նշանակություն ունի վարպետ ուսուցչի և սկսնակ մասնագետների միջև ծավալվող գործունեությունը:

Մեթոդմիավորման աշխատանքի պլանավորման ընթացքում երաշխավորվում է ներառել հետևյալ հարցերը.

- Առարկայի տեսական և դասավանդման մեթոդիկայի հարցեր, հարցեր մանկավարժությունից և հոգեբանությունից (մասնագետների ելույթներ):
- Ծրագրում ընդգրկված բարդություն ներկայացնող հարցերի ուսումնասիրում և այդ կապակցությամբ մեթոդամանկավարժական գրականության իրազեկում:
- Նորմատիվ փաստաթղթերի ուսումնասիրում:
- Նոր դասագրքերի ուսումնասիրում:
- Երաշխավորությունների, հուշագրերի, զննական միջոցների մշակում:
- Միջառարկայական կապերի հարցեր:
- Տետրերի ստուգման հարցե Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման և տարածման աշխատանք. սեմինարների կազմակերպում՝ գործնականության ապահովմամբ:
- Նպատակային փոխադարձ դասալսումներ, բաց դասեր:
- Ուսուցիչների դասավանդման որակի և սովորողների գիտելիքների մակարդակի ուսումնասիրում և արդյունքների քննարկում:
- ը:
- Սկսնակ ուսուցիչների հետ աշխատանքի կազմակերպում:
- Քննական նյութի նախապատրաստում:
- Սեմինարներ, խորհրդակցություններ:
- Առարկայական գիտագործնական համաժողովներ:

- Ինքնակրթության վերաբերյալ ուսուցիչների հաշվետվություններ:
- Մեթոդական նյութերի և մշակումների համակարգման կազմակերպում. դասա– պլաններ, ցուցահանդեսներ, թեմատիկ մշակումներ, դիդակտիկ նյութեր, զննական միջոցներ, սովորողների ստեղծագործական աշխատանքներ և այլն:
- Առարկայական արտադասարանական աշխատանք

3. Փորձարական հետազոտություն

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ <2021-2022>> ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԼԱՆ-ԾՐԱԳԻՐՆ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ

Թիվ	Օրը, ամիսը, տարեթիվը	Ուսումնադաստիարակչական աշխատանքի անվանումը կամ համառոտ բովանդակությունը	Կատարող
1	27.08.2021թ.	.Վանևան գյուղի միջնակարգ դպրոցի 2020-2021ուստարում պատմության մեթոդմիավորման կողմից կատարված աշխատանքնորի համառոտ նկարագիր . Առցանց ուսուցումից դուրս մնացած աշակերտներիհետ լրացուցիչ պարապմունքների կազմակերպում և արդյունքների քննարկում . Նախորդ ուսումնական տարվա առցանց աշխատանքների ամփոփում, հեռավար ուսուցման ձեռքբերումների և բացթողումների քննարկում, . Հանրակրթական առարկայական չափորոշիչների ծրագրերի, դասագրքերի, մեթոդական գրականության , գնահատման ձևերի, մեթոդական նամակների մասին, ուսումնական պլանների, նախագծերի քննարկում, կազմում՝ հաշվի առնելով համավարակի պայմանները . Համադպրոցական ուսումնական պլանի, դպրոցի պարտադիր և նախասիրական ժամաքանակների մասին	ՄՄ նախագահ, անդամներ,փոխ

		. Ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխման վերանայում, վերջնական դասաբաշխման իրականացում	
2	10.09.2021թ.	. Ճանոթանալ COVID-19 պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործունեության կազմակերպման ուղեցույցի պահանջներին և կազմակերպչական աշխատանքներին . Ճանոթանալ միավորային գնահատման բաղադրիչների՝ բանավոր հարցման, գործնական և գրավոր աշխատանքների քանակին ըստ առարկաների՝դասարանների և հատկացված շաբաթական ժամաքանակի . 2021-2022ուստարում մեթոդմիավորման ուսումնադաստիարակչական աշխատանքների պլան-ծրագրի քննարկում և կազմում, ապա հաստատում . Ներկայացնել նոր ուսումնական տարվա ուսումնական ծրագրերը, պետական չափորոշիչները, կազմել թեմատիկ պլան-ծրագրեր՝կատարելով գրավորների քանակի և անցկացման ձևի հետ կապված փոփոխությունները / թեմատիկ պլան-ծրագրեր կազմել և ներկայացնել էլեկտրոնային տարբերակով/ . 2021-2022ուստարում գործում է միայն էլեկտրոնային մատյանի տարբերակը/emis.am/	ՄՄ նախագահ, անդամներ,փոխս
3	29.10.2021թ.	. Մանկավարժական նոր տեսությունների և մեթոդների ուսումնասիրման և ներդրման ուղղությամբ կատարվելիք աշխատանքների քննարկում, ուսման որակի բարձրացում,դասավանդման որակի բարելավում : . Համավարակի պայմաններում դասի արդյունավետության բարձրացման ուղիների որոնում և մշակում: . Մեթոդամանկավարժական ընթերցումների	ՄՄ նախագահ, անդամներ,փոխս

		թեմաների ընտրություն և բաշխում . Առարկայական շաբաթի քննարկում, ժամանակացույցի հաստատում . Թեմատիկ և գործնական աշխատանքների կազմում/2 տարբերակներով/	
4	27.11.2021թ.	. Մասնախմբի անդամներից մեկի կողմից գիտամեթոդական ելույթ/ ուսուցման արդի մեթոդների կիրառում համավարակի պայմաններին համապատասխան/ . Կազմակերպել դասալսումներ՝ տարաբնույթ և տարանպատակ. - փոխադարձ դասալսումների կազմակերպում/դրանց քանակի ու գրանցումների իրականացում/ - երիտասարդ ուսուցիչների մոտ՝ մեթոդական աջակցություն - դասալսումներ՝ նախազգուշացումով, պլանավորված, վերահսկողական,նպատակային - ավարտական դասրաններում՝ քննություններին պատրաստվածության գնահատում . 7-9 դասարաններում դպրոցական օլիմպիադայի նյութերի ճշտում, տարբերակների կազմում, աշխատանքի բաշխում . Սովորողներին ներկայացվող նվազագույն պարտադիր պահանջները պատմությունից, ՀԵՊ-ից, հասարակագիտությունից	ՄՄ նախագահ, անդամներ,փոխ
5	25.12.2021թ.	. Ինֆորմացիա 1-ին կիսամյակի թեմատիկ պլան-ծրագրի կատարողականի մասին . Դասալսումների քննարկում . Կիսամյակային գրավոր աշխատանքների ժամանակին կազմում և անցկացում . Օլիմպիադայի առաջին փուլի արդյունքների քննարկում և երկրորդ փուլի նախապատրաստում, աշխատանքների բաշխում	ՄՄ նախագահ, անդամներ,փոխ

6	22.01.2022թ.	. 2-րդ կիսամյակի թեմատիկ պլանների կազմում և հաստատում . 1-ին կիսամյակի աշխատանքների արդյունքների վերլուծություն . Առարկայական շաբաթի նախապատրաստում և կազմակերպում փետրվար ամսվա ընթացքում / պատմություն առարկայից/ . Օլիմպիադայի տարածքային փուլին երաշխավորված աշակերտների հետ լրացուցիչ աշխատանքների կազմակերպում	ՄՄ նախագահ, անդամներ,փոխա
7	26.02.2022թ.	. Փոխադարձ դասալսումների կազմակերպում և քննարկում . Օլիմպիադայի 2-րդ փուլի արդյունքների քննարկում . Առարկայական շաբաթի կազմակերպում մարտ ամսվա ընթացքում /ՀԵՊ առարկայից/ . Օլիմպիադայի մարզային փուլին երաշխավորված աշակերտների հետ լրացուցիչ աշխատանքների կազմակերպում . Կարդալ զեկուցում<< Առցանց դասերի ընթացքում առաջացած խնդիրները >>վերնագրով	ՄՄ նախագահ, անդամներ,փոխա
8	26.03.2021թ.	. Դասալսումների քննարկում . Թեմատիկ աշխատանքների ժամանակին կազմում /պետական չափորոշիչներին համապատասխան/ և անցկացում . Էլեկտրոնային մատյաններում ուսուցիչների ամենօրյա աշխատանքների կատարում,անհրաժեշտության դեպքում օժանդակության ցուցաբերում	ՄՄ նախագահ, անդամներ,փոխա
9	27.04.2022թ.	. Ինֆորմացիա II կիսամյակի թեմատիկ պլան-ծրագրի կատարողականի մասին հաղորդում . Կազմել ստուգողական ամփոփիչ աշխատանքներ 120-200 ժամ բացակա ունեցող աշակերտների համար . Քննությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին / ամփոփիչ	ՄՄ նախագահ, անդամներ,փոխա

		կրկնությունների միջոցով աշակերտներին նախապատրաստել տարեվերջյան քննություններին/	
10	27.05.2022թ.	. Կիսամյակային գրավոր աշխատանքների ժամանակին կազմում և անցկացում . 120-200 ժամ բացակայություն ունեցող աշակերտների ստուգողական գրավոր աշխատանքների անցկացում, արդյունքների ամփոփում . Ստուգել թեմատիկ պլանների կատարողականը,թեմատիկ, կիսամյակային գրավորների, տետրերի առկայությունը և համապատասխանությունը չափորոշիչներին . 9-րդ դասարանցիների ավարտական քննությունների կազմակերպում ա/ Հենվելով գործող դասագրքերի և ծրագրերի վրա , հաշվի առնելով տվյալ պահին գործող պետական չափորոշիչները, բոլոր ուսուցիչների առաջարկությունները,կարծիքները՝ կազմել քննական հարցաշարեր:	ՄՄ նախագահ, անդամներ,փոխ
11	24.06.2022թ.	. Տարեկան ուսումնական ծրագրերի կատարողականի ստուգում, աշխատանքների ամփոփում: . Հայոց պատմությունից 9-րդ դասարանի ավարտական բանավոր քննությունների արդյունքների ամփոփում . Նախնական դասաբաշխում . Ներկայացնել 2021-22 ուստարվա աշակերտների առաջադիմության և որակի վերլուծությունը, եզրակացությունների հանգում: . Ելնելով առաջադիմության և որակի վերլուծություններից ՝ կատարել հաջորդ տարվա ուսումնական ծրագրերի ռազմավարության ընտրում, գալիք աշխատանքների կատարում	ՄՄ նախագահ, անդամներ,փոխ

Արձանագրություն N_7

2022թ. Փետրվարի 15-ին տեղի ունեցավ Վանևան գյուղի միջնակարգ դպրոցի պատմության առարկայի մեթոդմիավորման նիստը: Նիստին մասնակցում էին մեթոդմիավորման երեք անդամները:

Օրակարգում՝

1.2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակում գնահատման նոր մեթոդական ցուցումների մասին

/Զեկուցող՝ մեթոդմիավորման նախագահ Ի.Հարությունյան/::

2.ՈՒսուցիչների ինքնակրթության և կամավոր ատեստատավորման մասին

/Զեկուցող՝ պատմության ուսուցչուհի Ցու. Սարկիսյան/:

3.Այլ հարցեր:

1.Լսեցին-մեթոդմիավորման նախագահ Ի.Հարությունյանին: Նա նշեց, որ բազմաթիվ ծնողների բողոքի հիման վրա քննարկվել է կիսամյակային գրավոր աշխատանքների արդյունքները: Պարզվում է մեկ կիսամյակային գրավոր աշխատանքից ստացած ցածր կամ բարձր գնահատականը կարող է որոշիչ լինել մինչ այդ ձևավորված ընթացիկ միավորային գնահատականի վրա: Ուստի ԿԳՄՍ նախարարությունը դպրոցներին է ուղարկել

2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի գնահատման նոր մեթոդական ցուցումները: Համածայն որի կիսամյակային գրավոր աշխատանքները հանվել են , և միավորային գնահատումը կատարվում է հետևյալ ձևով.

- Բանավոր հարցում
- Գործնական աշխատանք
- Նախագծային աշխատանք
- Թեմատիկ աշխատանք
- Ամփոփիչ աշխատանքներ /բացառիկ դեպքերու

Հասարակագիտություն,Հայոց պատմություն, Համաշխարհային պատմություն, Հայոց եկեղեցու պատմություն առարկաների դեպքում թեմատիկ աշխատանքները կարող են իրականացվել նաև գործնական աշխատանքի կամ նախագծային աշխատանքի ձևով:

Աշակերտների կիսամյակային գնահատումը բոլոր առարկաներից ձևավորվում է հետևյալ կերպ.

1.Որոշվում է կիսամյակի ընթացքում միավորային գնահատման բոլոր տեսակներից աշակերտի ստացած գնահատականների միջին թվաբանականը և այն մոտիվացվում է ամբողջ թվով:

2.Ստացված ամբողջ թիվը կլինի աշակերտի կիսամյակային գնահատականը:

Երկրորդ կիսամյակում արդեն հաստատված թեմատիկ պլանավորումը փոփոխության կարիք չունի: Նախատեսված կիսամյակային գրավորը կարելի է փոխարինել կրկնությամբ:

Լսելով զեկույցը մեթոդմիավորումը

Որոշում է՝

Առաջնորդվել 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի գնահատման նոր մեթոդական ցուցումներով և պահպանել նախապես սահմանված գրավորների նվազագույն քանակը /մեկ գործնական, մեկ թեմատիկ/:

2. Լսեցին-մեթոդմիավորման անդամ, պատմության ուսուցչուհի Ցու.Սարկիսյանին: Նա նշեց, որ ուսուցիչների ինքնակրթությունը շատ կարևոր է: Ինքնակրթության մեթոդները բազմաթիվ են, հատկապես այսօրվա զարգացած տեխնոլոգիաները մեծ հնարավորություն են տալիս: Տարբեր հարթակներում

կազմակերպվում են օնլայն դասընթացներ մասնագիտական որակների բարձրացման նպատակով: Կարելի է օգտվել նաև ԳԹԿ__ի կայքում տեղադրված կամավոր ատեստատավորման թեստերից:

Արտահայտվեց մեթոդմիավորման անդամ Մ.Ասատրյանը: Նա նույնպես կարևորեց ուսուցչի ինքնակրթությունը, մասնագիտական որակների բարձրացումը, և առաջարկեց կազմակերպել փոխադարձ դասալսումներ՝ փորձի փոխանակման նպատակով:

Լսելով առաջարկությունները մեթոդմիավորումը

Որոշում է՝

Ա. Լրջորեն զբաղվել ինքնակրթությանբ և նախապատրաստվել կամավոր ատեստատավորման:

Բ. Կազմակերպել փոխադարձ դասալսումներ, փորձի փոխանակման նպատակով:

3. Քննարկվեցին այլ հարցեր: Օրինակ՝ պատության մեթոդմիավորման առարկայական մասնախմբի օգնությամբ տարբեր դասարաններից /ցանկության սկզբունքով/ կազմել խումբ և կազմակերպել էքսկուրսիա տարածաշրջանի պատմամշակութային վայրեր: Աշակերտների հետ տեղում ծանոթանալ տվյալ հուշարձանի, եկեղեցու կառուցման, հնագույն արձանագրության առկայության դեպքում փորձել վերծանել, որոշել տեսակը և այլն:

Մեթոդմիավորման նախագահ՝ Ի.Հարությունյան

Մեթոդմիավորման քարտուղար՝ Ցու.Սարկիսյա

3.1Փորձարարականհետազոտություն

Խմբի նկարագիր

Վանևան գյուղի միջնակարգ դպրոցի պատմության մեթոդմիավորման մասնախումբը կազմված է մասնախմբում ընդգրկված առարկաները դասավանդող ուսուցիչներից: Ամենամսյա նիստերին հաճախ մասնակցում են նաև հաստատության տնօրենը կամ փոխտնօրենը: Նիստերի ընթացքում կատարվում է ուսումնական պլանով նախատեսված դպրոցական պարտադիր և բաղադրիչ ժամաքանակի բաշխում, քննարկվում են նոր դասագրքերն ու ուսումնաօժանդակ գրականությունը, նոր ծրագրային չափորոշիչները, ինչպես նաև յուրաքանչյուր ուսուցչի կումից կազմված թեմատիկ պլանները: Խումբը միասնական է, հարկ եղած դեպքում միմյանց օգնում են: Մասնակիցները նիստերի ընթացքում վերհանում են դասավանդման առկա խնդիրները, դժվարությունները, քննարկում են այն թեմաները, որոնք ավելի հեշտ է յուրացվում աշակերտների կողմից:

Վերլուծություն

Այս նիստի ընթացքում մենք մանրամասը քննարկեցինք ԿԳՄՍ նախարարության կողմից սահմանված գնահատման նոր մեթոդական ցուցումները: Քննարկեցինք խմբի անդամներից յուրաքանչյուրի կողմից բարձրացված հարցերը: ՈՒսուցիչներին մտահոգում էր հատկապես արդեն իսկ կազմված թեմատիկ ծրագրերի

փոփոխությունները: Սակայն մեթոդմիավորումը ճկուն գտնվեց և ճիշտ որոշում կայացրեց՝ մեկ կիսամյակային գրավոր աշխատանքը փոխարինելով կրկնության դասով: ՈՒսուցիչներիս համար անհասկանալի էր ամփոփիչ աշխատանքն ու նախագծային աշխատանքը, որոնք պարզաբանվեցին: Սակայն նախագծային աշխատանքը դեռևս պարզաբանման կարիք ունի:

Նիստն անցավ թեժ քննարկումներով, վերլուծություններով, մեթոդական խորհրդատվությամբ:

Նիստը գնահատում եմ հաջողված:

Եզրակացություն

Այսպսով մեթոդմիավորումները մասնագիտական զարգացման ազդեցիկ միջոց են դպրոցի ներսում ուսուցիչների համագործակցությանը: Ստեղծվում են ուսուցչական խմբեր, որոնք համատեղ մշակում են դասի պլաններ, ապա կատարում դասերի վերլուծություններ, կազմակերպվում են փոխադարձ դասալսումներ փորձի փոխանակման նպատակով: Ինչպես նաև ուսուցիչները առաջարկություններ և դիտողություններ են ստանում իրենց գործընկերներից և հնարավորություն ստանում բարելավելու իրենց աշխատանքը:

Գրականության ցանկ

1. https;/lib.armedu.am
2. Պաշարների շտեմարան